ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«14» 09 2023թ.
No 7-1/56257-2023

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ foi@foi.am

Ի պատասխան 14.08.2023թ. թիվ SR8B-6918-CE58-8C64 գրության՝

Հարգելի տիկին Դոյդոյան

Գրության 1-ին և 2-րդ կետերի վերաբերյալ տեղեկացվում է, որ ՀՀ ներմուծված և ՀՀ-ից արտահանված ապրանքների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքէջի՝

https://src.am/am/customStatisticsPage?id=128 հասցեում:

Գրության 3-րդ կետի վերաբերյալ տեղեկացվում է, որ ՀՀ ՊԵԿ նմանատիպ տեղեկատվությունը առկա չէ:

Գրության 4-րդ և 6-րդ կետի վերաբերյալ տեղեկացվում է, որ 2023 թվականի մայիսի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 808-Ն որոշումը, որով հաստատվել է ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն այն ապրանքների ցանկը, որոնց արտահանումը ՀՀ-ից կամ դրանց տարանցիկ փոխադրումը, անկախ այն հանգամանքից տվյալ պահին հանդիսանում են հսկվող ապրանքներ թե ոչ, պետք է իրականացվեն օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով տրամադրված թույլտվության հիման վրա:

Գրության 5-րդ կետի վերաբերյալ տեղեկացվում է, որ 2022թ. ընթացքում ՀՀ-ից ՌԴ արտահանվել են հայկական ծագման կիսահաղորդիչներ:

Գրության 7-րդ կետի վերաբերյալ, ըստ ՀՀ ՊԵԿ առկա էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի (ըստ ապրանքների հայտարարագրերի և ՀՀ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

կառավարության 28.06.2018թ. 737-Ն որոշման համաձայն ներկայացված վիճակագրական ձևի)՝ տեղեկացվում է, որ 2022թ. ընթացքում ԱՏԳ ԱԱ 8806 (անօդաչու թռչող ապարատներ) ծածկագրով ՀՀ-ից ՌԴ են արտահանվել ապրանքներ, որոնց ծագման երկրներն են՝ ԱՄԷ և Չինաստանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՄՎ ԵՎ ԵՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՎԱՐԴԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝
Նաիրա Նիկողոսյան
մաքսային վիճակագրության և
տեղեկատվության բաժին
(060)841-088